ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երևանի պետական համալսարանի
ակադեմիական/ուսումնական գծով
պրոռեկտոր՝
Է. Ասրիյան

« 23 » հունվար 2022 թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Քննարկմանը մասնակցում էին՝ «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մնացականյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Կ. Ներսիսյանը, տ.գ.թ., դոցենտ. Թ. Հովակիմյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ. Սահակյանը, ավագ լաբորանտ Ա. Սարգսյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոռուպցիան գոյություն ունենալով ցանկացած հասարակության մեջ, ունի ընկալման տարբեր մակարդակներ, սակայն, ընդհանուր առմամբ այն բնորոշվում է որպես բացասական երևույթ: Իհարկե, բազմաթիվ հետազոտություններ են կատարվել ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի հետազոտողների կողմից՝ ուղղված կոռուպցիայի էությանը, գնահատմանը և հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը, սակայն դեռևս կան մի շարք բացթողումներ, որոնք պատճառ են հանդիսանում կոռուպցիայի ձևավորման և հետագա զարգացման համար:

Չնայած կոռուպցիան կանխելու և կոռուպցիոն գործելակերպը պատժելու բազմաթիվ և հաճախ հաջող բարեփոխումներին՝ երկրները, այդ թվում նաև՝ ՀՀ-ն, շարունակում են չհաղթահարել պետական և մասնավոր հատվածների կոռուպցիան, պայմանավորված մի շարք խնդիրներով, ինչպիսիք են՝ կոռուպցիայի ընկալման և

կոռուպցիայի իրական մակարդակի անհամարժեքությունը կամ ապակողմնորոշումը և կոռուպցիայի չափազանց ընդհանրական գնահատումները, ինչն էլ բացասաբար է ազդում տվյալ երկրում հատկապես բնակչության ցածր եկամուտ ունեցող խավի կենսամակարդակի վրա: Հետևաբար, կոռուպցիայի դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է տեղեկատվություն ունենալ վերջինիս առաջացման նախադրյալների մասին, վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ, ուղղված՝ պետական կառավարման համակարգերում բարեփոխումների իրականացմանը և հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեղինակի կողմից, որպես հետազոտության հիմնական նպատակ է դրվել բացահայտել հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Հիմնական նպատակին հասնելու համար հեղինակը առաջ է քաշել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հակակոռուպցիոն մեխանիզմների էությունը, և դրանց վրա ազդող գործոնները,
- վերլուծել հակակոռուպցիոն մեխանիզմների պետական կարգավորման մեխանիզմները,
- բացահայտել պետական կառավարման համակարգում (գործադիր մարմին) կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավոր դեպքերը,
- առանձնացնել և համակարգել դեղերի շուկայում կոռուպցիոն ռիսկերի առաջացման մեխանիզմները, ինչպես նաև՝ մշակել հակակոռուպցիոն մեխանիզմներ պետությանը հասցված ֆինանսական և տնտեսական վնասների չափը նվազեցնելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում կոռուպցիոն համակարգերի ուսումնասիրությունն է, իսկ հետազոտության առարկան՝ հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատումն է՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տնտեսական և գործնական նշանակության արդյունքներ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. Բազմագործոն ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելի կիրառմամբ գնահատվել է պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց եկամուտների վրա ազդող կոռուպցիոն ռիսկերի չափը՝ առանձնացնելով կոռուպցիոն ռիսկի առաջացման դրդապատճառները հակակոռուպցիոն նպատակադրված քաղաքականության իրականացման համատեքստում:
2. Հակակոռուպցիոն ռիսկերի ֆինանսական գնահատման արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում կոռուպցիայի, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության, միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապը, ինչպես նաև մշակվել է կոռուպցիայի նվազեցման ձևաչափ՝ ուղղված ՀՀ-ում տնտեսական բարեկեցության բարձրացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 130 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների առաջացման նախադրյալները և դրանց տեսամեթոդաբանական գնահատման մոտեցումները» գլուխը** նվիրված է հակակոռուպցիոն մեխանիզմների առաջացման

նախադրյալների և դրանց տեսամեթոդաբանական գնահատման մոտեցումների ուսումնասիրությանը:

Հեղինակի կողմից ներկայացվել են կոռուպցիայի տեսությունները, դասակարգման մոտեցումներն ու հակակոռուպցիոն մեխանիզմների տնտեսական դրդապատճառները արտերկրում, ինչպես նաև, մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա, ներկայացվել են նաև կոռուպցիայի չափման և կոռուպցիայի լավ կառավարման մակարդակներն արտացոլող համաթվերը:

Ատենախոսության **երկրորդ՝ «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման ուղղությունները ՀՀ-ում» գլխում** ներկայացվել են հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման ուղղությունները ՀՀ-ում: Մասնավորապես, հեղինակը ներկայացրել է կոռուպցիայի դեմ պայքարի որակական գնահատման մեխանիզմ, որի նպատակն է բացահայտել դեղորայքային բիզնեսում կոռուպցիոն մեխանիզմները, դրանց առաջացման ռիսկերը և ներկայացրել՝ վերջիններիս նվազեցման գործնական քայլեր:

Ատենախոսության **երրորդ՝ «Հակակոռուպցիոն մեխանզիմների ֆինանսական ռազմավարության մշակման գերակայություններն և դրանց կիրառման անհրաժեշտությունը ՀՀ-ում» գլխում** դիտարկվել են հակակոռուպցիոն մեխանզիմների ֆինանսական ռազմավարության մշակման գերակայությունները և դրանց կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հակակոռուպցիոն մեխանիզմի արդյունավետ ֆինանսական գնահատման առումով՝ հեղինակի կողմից մշակվել և ներկայացվել է ձևաչափ, համաձայն որի, հակակոռուպցիոն մեխանիզմի ֆինանսական գնահատման արդյունքում առանձնացվել են հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման առաջնային գործոնները, մասնավորապես, անվանական ՀՆԱ-ն, միջին ամսական անվանական աշխատավարձը և ժողովրդավարության մակարդակը, պայմանավորված՝ առանձին ենթակառուցվածքների կայացմամբ, որոնք էլ ուղղված են տնտեսական բարեկեցության բարձրացմանը:

Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփվել են **«Եզրակացություններ»** բաժնում, որտեղ տրվել են նաև գործնական բնույթի առաջարկություններ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Չնայած ատենախոսությունը վերնագրված է <<Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>>, այդուհանդերձ, հեղինակն իր վերլուծությունն

իրականացրել է դեղագործության ոլորտի կտրվածքով: Նախ, համոզիչ չեն ներկայանում հեղինակի կողմից բերված փաստարկները նման ընտրության հետ կապված՝ հաշվի առնելով կոռուպցիայի առանձնահատուկ բնույթն ու դրսևորումները տարբեր ոլորտներում: Բացի այդ, նման շեղումը հեղինակին զրկել է ընտրված թեմայով պայմանավորված համապարփակ լուծումներ մշակելու և գիտական արդյունքներ ապահովելու հնարավորությունից:

2. Աշխատանքի 1.1 պարագրաֆը վերնագրված է <<Կոռուպցիայի էությունը, տեսություններն և դասակարգման չափորոշիչները>>, սակայն տեսություններ, որպես այդպիսիք, ներկայացված չեն: Հեղինակը սահմանափակվել է միայն կոռուպցիայի վերաբերյալ տարբեր մեկնաբանությունների ներկայացմամբ: Ընդ որում, հեղինակն այդպես էլ չի ներկայացնում կոռուպցիայի սեփական մեկնաբանությունը կամ գոյություն ունեցողներից առավել ընդունելի տարբերակը:

3. Աշխատանքի 1-ին գլխում, որն ընդգրկում է 7-56-րդ էջերը, ներկայացված չեն հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման էությունը, բովանդակությունը և չափորոշիչները: Տվյալ գլխում իրականացված հետազոտությունը կրում է հիմնականում նկարագրական բնույթ՝ ունենալով առավելապես իրավական, քան տնտեսական ուղղվածություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսությունը ներկայացված է պաշտպանության Ը. 00.03 <<Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>> մասնագիտությամբ, տվյալ հանգամանքը կարևոր բացթողում է:

4. Ատենախոսության 57-րդ էջում հեղինակը նշում է, որ <<Աշխատանքում մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի որակական գնահատման մեխանիզմ, որի գործածությունը ներդրվել է ինտերնետային հարթակում>>: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ներկայացվածն ընդամենը սովորական հարցաթերթիկ է, որը որևէ պարագայում չի կարելի համարել մեխանիզմ և այն վերաբերում է միայն դեղագործության ոլորտին, հետևաբար հարցման արդյունքները գիտական արդյունքների ձևավորման աղբյուր չեն և կիրառելի չեն մյուս ոլորտների համար:

5. Աշխատանքում տեղ են գտել ոչ ճիշտ մեկնաբանություններ և անավարտ հաշվարկներ: Մասնավորապես

- Էջ 64-ում հեղինակն է առաջարկում մոդել: Պարզ չէ, թե ինչ է լուծում մոդելը՝ Y=a+bx, b=1.2%, որտեղից է ստացվում և ինչպես, բացակայում են հաշվարկները,

- էջ 68-69, նախավերջին կետ «սպառողական գների աճը բերում է աշխատավարձի նվազմանը..»: Կարծում ենք ճիշտ կլիներ նշել «գնողունակության նվազմանը»,
- էջ 93՝ 2.1.3 բանաձևի հաշվարկը անհասկանալի է և լրացուցիչ պարզաբանման կարիք ունի,
- էջ 93-ից նշվում է ֆոնդային բորսայում ցուցակվելու մասին, սակայն հիմնավորված չէ թե ֆոնդային բորսայում ցուցակումը ինչ առավելություններ է տալու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը կարելի է գնահատել որպես ինքնուրույն հետազոտություն: Գրախոսվող ատենախոսությունը հեղինակի մի շարք տարիների գիտական հետազոտության արդյունք է: Ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում են ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները, իսկ դրանց համահունչ հեղինակի կողմից հրապարկվել են գիտական հոդվածներ:

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով սեղմագիրը համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն հաջող հրապարակային պաշտպանության դեպքում արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ,
տ.գ.դ. պրոֆեսոր՝ Հ.Գ. Մնացականյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ
տ.գ.թ.՝ Գ. Է. Սահակյան

Ստորագրությունները հաստատում եմ
ԵՊՀ գիտքարտուղար, դ.գ.թ. Մ.Վ.Հովհաննիսյան